ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայ ժողովրդի ցեղասերման (էթնոգենեզի) պատմության բարդ հարցերը լուծելիս անհրաժեշտ է պատմական հնագույն գրավոր վկայություններից, հնագիտական ու լեզվագիտական տվյալներից բացի, լայնորեն օգտագործել նաև մարդաբանական տվյալները։

Ներկայումս գիտականորեն հիմնավորված է, որ Կովկասի ժամանակակից բնակչությունը մարդաբանական տեսակետից պատկանում է մեծ եվրոպեոիդ կամ եվրոպական ռասայի հարավային ճյուղին։ 1790 թ. Հ. Բլյումենբախը այդ ռասայի բնորոշման համար առաջարկեց կովկասյան ռասա անունը[1]։ Ի. Դենիկերը մարդկային ռասաների իր դասակարգման մեջ գանգուր և ալեձև մազեր, սպիտակ (թուխ) մաշկ, կախ, դուրս ցցված քիթ և կլոր գանգ ունեցող ցեղերին կոչեց ասսուրատիպ[2]։ Հետագայում այս տիպը ընդհանրացվեց Կովկասի բնակչության համար։ Ա. Իվանովսկին Կովկասի մարդաբանական տիպերը դասակարգեց ըստ ազգային պատկանելության[3]։

Կովկասի ժամանակակից բնակչության մշակված մարդաբանական դասակարգումը, որն այժմ ընդունվում է բոլորի կողմից, պատկանում է սովետական անվանի մարդաբան Վ. Վ. Բունակին[4]։ Ըստ նրա դասակարգման, Կովկասի ներկայիս բնակչությունը ներկայացված է մեծ եվրոպեոիդ ռասայի երկու տարատեսակներով՝ միջերկրածովյան և պամիրա-ալպյան։ Իրենց հերթին միջերկրածովյանը բաժանվում է պոնտական և կասպիական, իսկ պամիրա-ալպյանը՝ պոնտա-զագրոսյան կամ առաջավոր-ասիական, արմենոիդ և կովկասյան ռասաների։

Այս ռասաներից յուրաքանչյուրից Վ. Բունակը առանձնացնում է հետևյալ ենթառասաները. պոնտականում՝ միջին կուբանական, կասպիականում՝ արևելյան և արևմտյան կասպիական, պոնտա-զագրոսյանում՝ Ղարաբաղի, լոռի-փամբակյան, սամուրյան (դաղստանյան) և շիրակյան, կովկասյանում՝ լիախվա-ալազանյան, դվիրիլյան, ներքին-ռիոնյան, բարձրլեռնային, վերին-թերեքյան և ներքին արդունյան։ Այսպիսի նեղ, լոկալ տիպերի է բաժանում նա նաև արևմտա-կասպիական ենթառասան, որտեղ հանդես են գալիս ներքին-քուռյան, արաքսյան և էլբուրսյան տիպերը։

---

[1] J. F. Blumenbach, Decas Collectionis suae Craniorum diversarum gentium illustrata, Gotingen, 1790.

[2] И. Деникер, Человеческие расы. С. Петербург, 1902.

[3] А. А. Ивановский, Опыт антропологической классификации населения России, «Русск. антр. журнал», 1903, № 3—4.

[4] В. В. Бунак, Антропологический состав населения Кавказа, «Вестник Гос. Музея Грузии», т. XIII—А, 1946.

Ն. Չեբոկսարովի մարդաբանական նոր դասակարգման մեջ Կովկասի բնակչությանը տեղ է հատկացվում մի կողմից՝ միջերկրա-բալկանյան և մյուս կողմից՝ առաջավորասիական ռասաներում, որոնք կազմում են մեծ եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղը[5]։ Վերջերս այդ ռասային տրվում է նաև հնդկա-միջերկրածովյան անունը։

Գ. Ֆ. Դեբեցը Կովկասի արդի բնակչության մեջ առանձնացնում է չորս տիպ՝ կասպիական կամ Ադրբեջանի բնակչության տիպ, կավկասիոնյան կամ Մեծ Կովկասյան բարձրավանդակի բնակչության տիպ[6], առաջավորասիական կամ Հայաստանի և Արևելյան Վրաստանի բնակչության տիպ և պոնտական կամ Կուբանի բնակչության տիպ[7]։

Յա. Ռոգինսկին և Մ. Լևինը Կովկասի բուն բնակչությունը տեղադրում են երկու մեծ եվրոպեոիդ ռասաների՝ բալկանա-կովկասյանի և հնդկա-միջերկրածովյանի միջև[8]։ Վերջինս ընդգրկում է Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս ընկած տարածությունը և իր հերթին բաժանվում է երեք մեծ ենթառասաների՝ հնդկա-պամիրյան, միջերկրա-բալկանյան և առաջավորասիական։

Միջերկրա-բալկանյան տիպը բնութագրվում է ալեձև ու խիստ զարգացած մազե ծածկով, նեղ և խիստ ընդգծվող դեմքով, նեղ և ոչ շատ դուրս ընկած քթով, քիչ հաստ շրթներով։ Այս խումբը գերակշռում է Հարավային Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի բնակչության մեջ։ Կազմաբանական տեսակետից նրան է հարում և նմանվում հնդկա-պամիրական խումբը, որի ներկայացուցիչների տարբերությունը կազմում է բավական խիստ արտահայտված թուխ մաշկը։ Հնդկա-պամիրական խումբը լայն տարածում ունի Միջին Ասիայում (տաջիկներ, ուզբեկներ, թուրքմեններ), Աֆղանստանում, Իրանում և Հյուսիսային Հնդկաստանում։ Անդրկովկասում, Միջագետքում, Սիրիայում, Պաղեստինում և Իրաքում բնակվող ժողովուրդները պատկանում են առաջավորասիական ենթառասային։ Անդրկովկասում առաջավորասիական տիպը հանդես է գալիս կոլխյան, իբերյան, արմենական ու ասսուրական տիպերով, որոնցից մի քանիսն ունեն նաև իրենց լոկալ տարբերակները (արմենոիդ-ղարաբաղյան, վանա-ուրմյան, լոռի-փամբակյան, շիրակյան)։

Առաջավորասիական մարդաբանական տիպը հայտնի է հնագույն ժամանակներից, նա լայնորեն տարածված էր Միջագետքի հարավից մինչև Տիգրիսի ու Եփրատի վերին հոսանքները, Անատոլական բարձրավանդակի և վերին Իրանի շրջաններում։ Գ. Ֆ. Դեբեցի կարծիքով առաջավորասիական խմբի ներկա տարածման տվյալները թույլ են տալիս ասելու, որ նրա ձևավորումը տեղի է ունեցել մոտավորապես այն տերիտորիայում, որտեղ այժմ նա տարածված է ու գոյություն ունի[9]։

---

[5] Н. Н. Чебоксаров, Основные принципы антропологических классификаций, «Тр. ин-та этнографии», Новая серия, т. XVI, 1951.

[6] Մարդաբանական այս տիպը 1954 թ. առաջին անգամ առանձնացրել են վրաց մարդաբաններ Ա. Ն. Նաթիշվիլին և Գ. Մ. Արդուշելիշվիլին։

[7] Г. Ф. Дебец, Антропологические типы. Народы мира, Народы Кавказа, I, Москва, 1960.

[8] Я. Я. Рогинский, М. Г. Левин, Основы антропологии, М., 1955.

[9] Г. Ф. Дебец, Заселение Южной и Передней Азии по данным антропологии, «Труды Ин-та этнографии», Новая серия, т. XVI, 1951, էջ 366։

Ինչպես ցույց է տալիս հնէամարդաբանական նյութը, Առաջավոր Ասիայում հնագույն ժամանակներից գերիշխում էր դոլիխոկրան (երկարագանգ) տիպը։ Հենց այս նույն տերիտորիայում էլ հետագայում առաջացել ու կազմավորվել է ժամանակակից բրախիկրան (կարճագանգ) առաջավորասիական տիպը։

Մարդաբանական բազմաթիվ դիտումները ցույց են տվել, որ ներկա հայության մի ստվար մեծամասնությունն ունի մթագույն մաշկ, թուխ մազ ու աչք, լայն, կլոր գլուխ և դեմք, կարճ գանգ, լայնկեկ քիթ և միջահասակ ու հաստակազմ մարմին (հայերի փոքր մասի համար է բնորոշ բաց դույնի մաշկը, մազերն ու աչքերը, նեղ դեմքն ու երկար գլուխը, նեղ, ուղիղ և արծվային քիթը, բարձրահասակ ու նրբակազմ մարմինը)։ Մարդաբանական այս տիպը, որը մարդաբան Ֆ. Լուշանի կողմից կոչվեց «արմենոիդ», նույն առաջավորասիական տիպն է։

Լուշանը արմենական է համարում բարձր ու կլոր գլուխ, տափակ ծոծրակ և արծվի ռունգ ու թխագեմ մարդաբանական հատկանիշներ ունեցող ժողովուրդներին, որոնք մինչև սեմական ու հնդեվրոպական ժողովուրդների գաղթը վաղուց զբաղեցրել էին Առաջավոր Ասիան[10]։ Մարդաբանական այս տիպը հայտնի է եգիպտական XIX դինաստիայի բարձրաքանդակներից, որտեղ պատկերված են եգիպտացիների դեմ պատերազմող խեթերը, որպես ծայրահեղ կարճ գանգ, բոլորովին տափակ ծոծրակ, շատ խիստ, ետ ընկած ճակատ, դուրս ցցված ու թեթև կոր քիթ, փոքր բերան ու ծնոտ, փոքր-ինչ ծռմռված դիմագիծ ունեցող մի ժողովուրդ։ Այս տիպը կրկնվում է նաև խեթական բարձրաքանդակներում, որտեղ, սակայն, մարդաբանական բնորոշ գծերը այնքան հատու, կենդանի կերպով չեն ներկայացվում, ինչպես պատկերում էին եգիպտական արվեստագետները[11]։ Ա. Գյոտցեի կարծիքով ինչպես եգիպտական, այնպես էլ խեթական բարձրաքանդակների տվյալները պետք է ընդունել մեծ վերապահությամբ, քանի որ մարդաբանական նպատակներով նրանց օգտագործումը պահանջում է դեն նետել այն հատկանշական գծերը, որոնք տրվել են արվեստագետների կողմից ոճի հաշվին։

Ա. Գյոտցեն գտնում է (Հ. Շենյուրեկի, Կանսուի, Կրոգմանի նման), որ արմենոիդ տիպը Փոքր Ասիայում հնագույն ժամանակներում ընդհանրապես գոյություն չի ունեցել, որ այստեղ հիմնականում տիրապետող է եղել երկարագանգ-դոլիխոկրան տիպը, իսկ կարճագանգ-բրախիկրան տիպը սկսում է հանդես գալ միայն վաղ բրոնզի դարաշրջանից հետո, խեթերի ժամանակ, որպես ներգաղթ կատարած ցեղերի տիպ։ Նրա կարծիքով բրախիկրանների զգալի աճը Առաջավոր Ասիայում պետք է բացատրել միմիայն հնդեվրոպական խեթա-նեսիտական ցեղերի ներգաղթով։ Ըստ Գյոտցեի, արդեն բրոնզի դարի ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայում միմյանց կողքի գոյություն ունեին մարդաբանական միջերկրածովյան ռասային պատկանող դոլիխոկրան և ալպիական ռասային պատկանող բրախիկրան ցեղեր։

Նման տեսություն իր ժամանակին մշակել էր նաև արևմտահայ մարդաբան Ռ. Քերումյանը, որը բրախիկրան արմենոիդներին կապում էր Բալկան-

[10] F. Luschan, The early inhabitants of Western Asia, „The Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland", vol. XLI, 1911, էջ 221—244։

[11] A. Goetze, Kleinasien, München, 1957, էջ 10—11։

յան թերակղզին զբաղեցրած մարդաբանական դինարյան ռասայի հետ, մարդաբանական հատկանիշների և ոչ մի տարբերություն չգտնելով այդ տիպերի միջև։ Նրա կարծիքով բրախիկրան տիպի նախահայրենիքը Եվրոպան է, իսկ Առաջավոր Ասիայում այդ տիպի հանդես գալը կապված է Եվրոպայից կատարված ներգաղթի հետ[12]։

Հետաքրքիր է այն փաստը, որ վերջերս ուշ տրիպոլյան դամբարաններից դուրս եկած մարդաբանական նյութերի մեջ (Նեղվիսկոյում պեղված դամբարանից) հայտնաբերվել է նաև արմենոիդ հատկանիշներով մի գանգ, որը վկայում է տրիպոլյան բնակչության կազմում արմենոիդների գոյության մասին դեռևս IV—III հազարամյակներում մ. թ. ա.[13]։

Գ. Ֆ. Դեբեցը արևմտյան մարդաբանների (Գ. Գյունտեր, Կ. Կուն) կողմից Առաջավոր Ասիայում ապրող հնդեվրոպական ժողովուրդների ծագումը եվրոպեոիդ ռասայի հյուսիսային կամ շիկամազ ճյուղի հետ կապելու փորձերը համարում է տենդենցիոզ և մտացածին։ Նա գտնում է, որ առաջավորասիական տիպի ձևավորումը տեղի է ունեցել տեղական սուբստրատի վրա և որ հայերի մարդաբանական կերպարի մեջ դեռևս չի բացահայտվել այնպիսի տարր, որը հնարավորություն տար ասելու, թե այն Առաջավոր Ասիա է թափանցել հնդեվրոպական ցեղերի տարածման ժամանակ[14]։ «Առաջավոր Ասիայի մարդաբանությանը նվիրված աշխատություններում,— գրում է Գ. Ֆ. Դեբեցը, —հաճախ են տեղ գտնում այնպիսի եզրահանգումներ, ըստ որոնց այստեղ գոյություն են ունեցել «նորդական» և «նախանորդական» տիպեր։ Բավական է ժամանակակից բնակչության մեջ տեսնել բաց գույնի մազ և աչքեր, որպեսզի այդ բացատրվի հյուսիսային ռասայի ներգաղթի միջոցով։ Այսպիսի «հայտնագործությունները» երբեմն արվում են գանգերի տեսակավորման պարզունակ հնարքներով։ Այսպես, օրինակ, Կրոգմանը Թեփե-Հիսարում (Իրան) հայտնաբերված գանգերի մեջ տեսնելով ավելի մասսիվը և ավելի նուրբը, գտնում է, որ առաջինները նախանորդական են, իսկ երկրորդները՝ միջերկրածովյան»[15]։ Գ. Ֆ. Դեբեցի կարծիքով մարդաբանությունն այստեղ գործ ունի առաջին հերթին նորմալ տարափոխության հետ։ Այսպիսի մեթոդով էլ (գանգերի հետագա զարգացումը և տարավոխությունը) նա դասակարգում է նաև առաջավորասիական կամ արմենոիդ մարդաբանական տիպը, բոլոր դեպքերում էլ հիմնական ցուցիչ համարելով բրախիկրան գանգը։

* * *

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայկական լեռնաշխարհը անհիշելի ժամանակներից ունեցել է հարուստ բուսական և կենդանական աշխարհ։

Չնայած Հայաստանի տերիտորիայում դեռևս չեն հայտնաբերվել բրածո մարդու մնացորդներ, սակայն Վրաստանում հայտնաբերված մարդանման

---

[12] R. Kherumian, A l'anthropologie du Caucase — Les arméniens, Paris, 1943.

[13] Т. С. Пассек, История племен в V—III тысячелетиях до н. э. на территории Молдавии, «Краткие сообщения ин-та археологии», 1965, № 105, էջ 9։

[14] Г. Ф. Дебец, Заселение Южной и Передней Азии по данным антропологии, էջ 366։

[15] Նույն տեղում, էջ 361։

կապկի, այսպես կոչված Ուդաբնոպիտեկի[16] մնացորդները, Ջվեմո-Զոդի գյուղից հայտնի նեանդերթալցու ատամը[17], ինչպես և պատմական Կորճայքի լեռներում Շանիդարի քարայրից գտնված մարդաբանական նյութերը[18] հավատ են ներշնչում, որ Անդրկովկասը հարել է մարդու կազմավորման առաջավորասիական արեալին։ Հետագա ժամանակաշրջաններից հայտնաբերված հնադիտական և քիչ ուշ՝ մարդաբանական նյութերն արդեն վկայում են մարդու անընդմեջ գոյությունը ողջ Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում։

Հայաստանում հայտնաբերված ամենահին հնէամարդաբանական նյութերը վերաբերում են էնեոլիթյան (IV—III հազ. մ. թ. ա.) ժամանակաշրջանին և հնարավորություն են տալիս հենց այդ ժամանակաշրջանից էլ հետևել մեր լեռնաշխարհի հնադույն բնակիչների ֆիզիկական կերպարին։

Մեզ հայտնի էնեոլիթյան ժամանակաշրջանի հնէամարդաբանական նյութերը հայտնաբերվել են Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղի մոտ (1954 թ.)[19] և Երևանի տերիտորիայում գտնվող Շենգավիթ հնավայրում (1955 թ.)[20], դամբարանների պեղումներից։

Ջրառատի մոտ հայտնաբերված հնէամարդաբանական ողջ նյութը ամենից առաջ բնութագրվում է եվրոպեոիդյան յուրահատկությունների ուժեղ արտահայտվածությամբ, որտեղ հատկապես աչքի է ընկնում դիմակմախքի փոքր լայնությունը։ Ջրառատի հնէամարդաբանական նյութը զգալի զուգահեռներ և կրկնություններ ունի հանձինս Ցամաքաբերդի և Նորադուզի դամբարաններից հայտնաբերված գանգերի, որոնք մոտ են կանգնած եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղի գանգերին։

Շենգավիթից հայտնի են հինգ կմախքներ՝ ոչ լավ պահպանված գանգերով։ Այս գանգերը դոլիխոկրան են, լայն ճակատով և դուրս ընկած ծոծրակով, դիմակմախքի միջին լայնությամբ։ Ճակատը քիչ թեք է, ակնախոռոչները ուղղանկյուն են, այտոսկրները՝ թույլ արտահայտված։ Քթարմատը և քթոսկրները քիչ տափակ են։ Շենգավիթի գանգերն ուսումնասիրող Հ. Ազիզյանը դրանք համարում է նախաեվրոպեոիդ, դոլիխոկրան տիպ[21]։

Հայաստանի բրոնզի և երկաթի դարաշրջանների հնէամարդաբանական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածում էլ Հայկական լեռնաշխարհում, Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում անընդմեջ պահպանվել է էնեոլիթի ժամանակաշրջանի մարդաբանական կերպարը և ցեղերի ծագման ընդհանրությունը[22]։ Հայաստանի էնեոլիթ-

---

16 Н. О. Бурчак-Абрамович, Е. Г. Габашвили, Высшая человекообразная обезьяна из верхнетретичных отложений Восточной Грузии (Кахетия), «Известия» Гос. муз. Грузии», XIII—А, 1946.

17 А. К. Габуния, Д. М. Тушабрамишвили, А. К. Векуа, Первая находка остатков мустьерского человека на Кавказе, «Вопросы антропологии», вып. 8, 1961.

18 R. S. Solecki, Three adult neanderthal skeletons from shanidar, cave, „Northern Iraq", Washington, 1960, էջ 603—604։

19 Վ. Պ. Ալեքսեև, Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության երկու խմբի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1964, № 1, էջ 20։

20 Г. Азизян, О черепах из энеолитических погребений в районе Шенгавита, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 327—332։

21 Նույն տեղում։

22 В. П. Алексеев, Итоги изучения палеоантропологии Кавказа. «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 140—141։

յան, բրոնզի և երկաթի դարաշրջանների գանգերի տվյալները իրենց եվրոպեոիդյան առանձնահատկություններով համարյա չեն տարբերվում ժամանակակից հայերի գանգաբանական տվյալներից[23]։

1956—1958 թթ. գանգաբանական առատ նյութեր հայտնաբերվեցին Սևանա լճի ցամաքած տերիտորիայում, Լճաշեն գյուղի մոտ կատարված պեղումների շնորհիվ։ Այդ նյութը հիմնականում վերաբերում է միջին բրոնզի դարաշրջանին։

Հայտնաբերված գանգերը դոլիխոկրան և մեզոկրան են, դրանց մեջ բացակայում են բրախիկրանները[24]։ Իրենց հատկանիշներով և կազմաբանական մի շարք առանձնահատկություններով Լճաշենի գանգերը որոշակիորեն տարբերվում են ինչպես Սևանի ավազանից հայտնի, այնպես էլ ժամանակակից հայերի գանգերից[25]։

1925 թ. Երևանի հիդրոկայանի կառուցման ժամանակ, Հրազդանի կիրճում, Ծիծեռնակաբերդից ոչ շատ հեռու պատահաբար հայտնաբերվել էր մի կմախք, որը հնագետ Ա. Քալանթարի կողմից դասվել էր կրոմանյան և նեանդերթալյան մարդու միջև[26]։ Հետագայում Բ. Ն. Վիշնևսկին անդրադառնալով այդ գյուտին, շատ աղքատիկ նյութի տվյալների հիման վրա հանգեց այն մտքին, թե մենք գործ ունենք նեոլիթի դարաշրջանին պատկանող հյուսիսեվրոպեոիդ ռասայի ներկայացուցչի հետ[27]։ Սակայն Բ. Ն. Վիշնևսկու դրույթները պաշտպանություն չգտան ինչպես թվագրման, այնպես էլ դասակարգման հարցում[28]։

Գանգերի մի մեծ խումբ էր հայտնաբերել հնագետ Ե. Լալայանը Նոր-Բայազետի (Ներկայիս Կամոյի) շրջանում կատարած պեղումների ժամանակ, որոնք, սակայն, կազմաբանորեն հստակ չեն[29]։ Վ. Բունակը, նկարագրելով Սևանա լճի ավազանում Ե. Լալայանի կողմից հայտնաբերված գանգերի այդ շարքը, գտնում էր, որ դրանք պատկանում են եվրոպեոիդ ռասայի հյուսիսային ճյուղի ներկայացուցիչներին։ Նա ձգտում էր ապացուցել, որ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների Հայաստանի բնակչության մեջ զգալի մաս են կազմել հյուսիսային ծագում ունեցող տարրերը, որոնք ծագումնաբանությամբ մերձենում են Հյուսիսային Գերմանիայի և Սկանդինավիայի բնակչության գանգաբանական տիպերին[30]։

Ավելի ուշ, անդրադառնալով այս գանգերի բնութագրմանը, Գ. Ֆ. Դեբեցը իրավացիորեն նկատեց, որ Վ. Բունակը իր ենթադրությունների մեջ թույլ է տվել անճշտություններ։ Գ. Ֆ. Դեբեցը համոզիչ փաստարկներով ցույց տվեց,

---

23 Նույն տեղում։

24 Г. Азизян, Палеоантропологический материал из погребений у селения Лчашен, «Պատմա-բանասիրական Հանդես», 1965, № 3, էջ 306—316։

25 Նույն տեղում, էջ 314։

26 А. Калантар, Сообщение о находке ископаемого человека в Армении, «Тр. II съезда зоологов, анатомов и гистологов СССР в Москве; 1925», Москва, 1925.

27 Б. Н. Вишневский, Палеоантропологическая находка близ Эривани, «Советская этнография», 1934, № 4—5:

28 Г. Ф. Дебец, Палеоантропология СССР, էջ 106—107։

29 Е. А. Лалаян, Археологические раскопки в Ново-Баязедском уезде ССР Армении, «Русск. антр. журнал», XVII, вып. 3—4, 1929.

30 В. В. Бунак, Черепа железного века из Севанского р-на Армении, «Русск. антр. журнал», т. XVII, вып. 3—4, 1929.

որ Անդրկովկասի, ինչպես և ողջ Կովկասի ժամանակակից գանգաբանական նշանների համադրումը վկայում է նրանց եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղին պատկանելու մասին և որ հիմքեր չկան պնդելու, թե Հայաստանի հնագույն բնակչությունը առաջին հերթին բնութագրվել է կապտաչությամբ և շիկահերությամբ[31]։

Երկար ժամանակ Վ. Բունակի նկարագրած նյութը Հայաստանում միակն էր, և միայն 1954 թ. Ցամաքաբերդ գյուղի մոտ (Սևանա լճի ափին) պեղված դամբարաններից դուրս եկած գանգերը լրացրին եղած բացը[32]։ Այդ նորահայտ նյութերը օգնեցին թվագրելու Ե. Լալայանի պեղումներից հայտնի վերը նշված նյութը, որը պատկանում է վաղ երկաթի ժամանակաշրջանին՝ մ. թ. ա. I հազարամյակի առաջին դարերին։

Վ. Պ. Ալեքսեևը, ծանոթանալով Ցամաքաբերդի գանգաբանական նյութերին, նշում է, որ այդ գանգերը բնութագրվում են բոլոր հիմնական պարամետրերի խիստ մեծ չափերով և, մասնավորապես, զգալի լայն դեմքով[33]։ Նկարագրելով Ցամաքաբերդի գանգերը, Վ. Պ. Ալեքսեևը գրում է. «Միաժամանակ դրանք չափազանց զանգվածեղ են, որը թույլ է տալիս դրանք մերձեցնել եվրոպեոիդ ռասայի հնագույն լայնադեմ տարբերակին։ Ապա նաև Վ. Վ. Բունակի նկարագրած սերիան բնութագրվում է նեղադիմությամբ և այդ առումով մոտ է ամենանեղադեմք եվրոպեոիդ սերիաներին։ Ընդհանուր առմամբ խստորեն աչքի է զարնում Ցամաքաբերդի գանգերի տարբերությունը Սևանա լճի հարավ-արևելյան ափի գանգերից և, եթե հիմնվենք միայն այդ երկու սերիայի քննության վրա, կարելի է գալ այն եզրակացության, որ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների սահմանագլխին Սևանի հարավային ափը բնակեցված է եղել տարասեռ մարդաբանական տիպի բնակչությամբ։ Մյուս կողմից, Ցամաքաբերդի դամբարաններից դուրս եկած գանգերը սակավաթիվ են, ուստի և ընտրության պատահականությունը չի կարելի լիովին բացասել»[34]։

Ցամաքաբերդի դամբարաններին հասակակից դամբարաններ պեղվել են նաև Սևանա լճի ափին գտնվող Նորադուզ գյուղի մոտ՝ Շորգյոլ կոչվող վայրում։ Այդ դամբարաններից հայտնաբերված գանգերը ներկայումս պահվում են Կամո քաղաքի գավառագիտական թանգարանում[35]։ Վ. Պ. Ալեքսեևը ուսումնասիրել է թանգարանում գտնվող տղամարդու յոթ և կանացի ութ գանգ՝ սեռային պատկանելությունը որոշելով գանգերի կազմաբանական յուրահատկությունների հիման վրա[36]։ Նորադուզի այս խմբի գանգերը բնութագրվում են եվրոպեոիդային յուրահատկությունների խիստ արտահայտված կոմպլեքսով։ Հատկապես իրեն զգացնել է տալիս քթոսկրների ցցվածությունը և քթարմատի բարձրությունը բնութագրող բոլոր չափերի խիստ մեծ լինելը։ Դիմակմախքը իր կազմությամբ կրկնում է Ցամաքաբերդի և Վ. Վ. Բու-

---

31 Г. Ф. Дебец, Палеоантропология СССР, էջ 175—177։

32 Պեղումները գլխավորել է Հ. Հ. Մնացականյանը։

33 Վ. Պ. Ալեքսեև, Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության երկու խմբի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1964, № 1, էջ 17։

34 Նույն տեղում, էջ 17—18։

35 Այդ վայրում Ե. Լալայանից բացի պեղումներ է կատարել նաև հնագետ Հ. Ա. Մարտիրոսյանը։

36 Վ. Պ. Ալեքսեև, նշվ. աշխ.։

նակի նկարագրած սերիաները։ Վ. Պ. Ալեքսեևը հանգել է այն եզրակացության, որ Սևանա լճի հարավային ափի բնակչությունը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում եվրոպեոիդային յուրահատկությունների արտահայտվածությամբ չի տարբերվել արդի հայերից[37]։ Նորադուզի գանգերը աչքի են ընկնում դեմքի զգալի չափերով և նույնիսկ չեն զիջում նույն ժամանակաշրջանի նախաեվրոպեոիդ տիպին վերաբերող հնէամարդաբանական սերիաների համանման չափերին, որոնք հայտնի են Սովետական Միության տերիտորիայի տարբեր տեղերից։ Գ. Ֆ. Դեբեցը այդ հատկանիշները կրող գանգերին տվել է կրոմանիոնյան անվանումը[38]։

Նորադուզյան գանգերը ունեն նաև դեմքի զգալի բարձրություն։ Դիմային չափերի այսպիսի յուրակերպ փոխհարաբերությունը զգալիորեն զատում է վերոհիշյալ սերիան նույն ժամանակի հնէամարդաբանական սերիաների մեծամասնությունից, միաժամանակ մերձենալով Ցամաքաբերդի գանգերին։

Վ. Պ. Ալեքսեևը Ցամաքաբերդի և Նորադուզի տվյալները քննելիս նշում է, որ դեմքի մեծ չափերը Սևանի մերձափնյա գերեզմանների սերիայում ուղեկցվում են գանգատուփի զգալի բարձրությամբ։ Այսպիսի հատկանիշներով դրանք չեն տարբերվում Առաջավոր Ասիայի առավել հին սերիաներից։ Ե. Լալայանի պեղումներից հայտնի գանգերի և Ցամաքաբերդի ու Նորադուզի գանգերի տարբերությունը հատկապես դրսևորվում է գիմաչափերի մեջ։ Փաստորեն Սևանա լճի ավազանում հանդես են գալիս նեղադեմ և լայնադեմ գանգերի խմբեր, որոնց առկայությունը անհնար է անտեսել։

Վերևում արդեն նշեցինք, որ 1954 թ. Սևանա լճից ոչ շատ հեռու (20 կմ), Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղի մոտ Հ. Հ. Մնացականյանի կողմից պեղված էնեոլիթյան ժամանակաշրջանի դամբանաթմբից գանգեր էին գտնվել։ Ցամաքաբերդի և Նորադուզի հնէամարդաբանական նյութերը իրենց եվրոպեոիդյան հատկանիշների արտահայտվածությամբ կրկնում են Ջրառատի նյութերն ու նման են ներկայիս հայկական գանգաբանական տիպերին[39]։

Ջրառատի գանգերի դիմակմախքի նվազ լայնությունը և նրա համադրումը Սևանա լճի ափին պեղված դամբարանների գանգերի հետ թույլ է տալիս ասելու, որ մերձսևանյան հնադույն բնակչությունը պատկանելիս է եղել եվրոպեոիդ մեծ ռասայի նեղադեմ տիպին։

Վ. Պ. Ալեքսեևի կարծիքով «...Ջրառատի մոտի պղնձաքարյան թաղումների գանգերի և Սևանա լճի հարավ-արևելյան ափի թաղումների համադրումը թույլ է տալիս դնել ծագումնաբանական կապերի հարցը այդ երկու խմբի միջև և դրականորեն պատասխանել դրան։ Ըստ երևույթին, այժմ մենք կարող ենք պնդել, որ բնակչության ժառանգականությունը մերձսևանյան շրջանում բրոնզի դարաշրջանի ընթացքում համենայն դեպս եղել է։ Այդ նշանակում է, որ մեր կողմից առանձնացված երկու խմբերից նեղադեմ խումբը ունի տեղական ծագում և սկիզբ է առնում նույն շրջանի ավելի վաղ բնակչությունից, նկատի առնելով, հարկավ, որ խոսքը վերաբերում է ոչ թե նեղ, տեղափակ (լոկալ) վայրի, այլ ամբողջ Սևանի ափին հարող բավականին ընդարձակ տերիտորիային»[40]։

---

37 Նույն տեղում, էջ 19։

38 Г. Ф. Дебец. Палеоантропология СССР, էջ 177։

39 Վ. Պ. Ալեքսեև, նշվ. աշխ., էջ 20։

40 Նույն տեղում, էջ 20—21։

Ցամաքաբերդի և Նորադուզի գանգերը դեմքի մեծ չափերով տարբերվում են Առաջավոր Ասիայի և Սամթավրոյի գանգերից ու հին գանգաբանական տարբերակներից[41]։ Որպես բացառություն կարելի է մատնանշել Սիալկի գանգերը, որոնք, սակայն, նկատելիորեն ավելի կլորագլուխ են։ Մերձավոր համադրման օրինակ է հանդիսանում Մինգեչաուրի ավելի ուշ թաղումների սերիան (մ. թ. ա. VII—V դդ.), որտեղ կաղմաբանական նմանությունը լրացվում է նաև հնագիտական նյութի զգալի ընդհանրությամբ[42]։

Վ. Պ. Ալեքսեևի եզրահանգումն այն է, որ Անդրկովկասի տերիտորիայում լայնադեմ տիպը երևան է եկել հյուսիսային մարդերից կատարված գաղթի հետևանքով և լայնորեն ներկայացված է բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանի թաղումներով։ Այս տիպը շատ է տարածված Ռուսական հարթավայրի և Ստորին Պովոլժյեի տերիտորիայում, մինչդեռ հարավում՝ Առաջավոր Ասիայում, հանդիպում է միայն մի գերեզմանում (Սիալկ)։

Այսպիսով, Սևանի ավազանից մեզ հայտնի հնէամարդաբանական նյութը պարզորոշ ցույց է տալիս, որ լճի հարավային ափի բնակչությունը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում տարբերվել է իր մարդաբանական տիպով, որ Սևանի ավազանի հարավ-արևելյան շրջանները բնակեցված են եղել նեղադեմ եվրոպեոիդներով, իսկ արևմտյան (Ցամաքաբերդ-Նորադուզի) շրջանը՝ լայնադեմ եվրոպեոիդներով[43]։ Բոլոր հիմքերը կան ասելու, որ նեղադեմ տիպը Հայաստանի տերիտորիայում հայտնի է ավելի վաղ ժամանակներից և, ըստ երևույթին, ունի տեղական ծագում[44]։

Արդեն նշեցինք, որ լայնադեմ տիպը ընդհանրություններ ունի Սիալկի և Մինգեչաուրի հնագույն բնակչության մարդաբանական տիպի հետ։ Թե այդ տիպը Անդրկովկասում երբ է հանդես եկել և որտեղից՝ դժվար է ասել։

Մ. թ. առաջին հազարամյակի սկզբների Հայաստանի բնակչության հնէամարդաբանական նյութերը մարդաբաններին դեռևս ծանոթ չեն։ Մեզ հայտնի վաղ միջնադարյան դամբարաններից (Դառնի) դուրս եկած մարդաբանական նյութերը դեռևս հրապարակված չեն, չնայած մասնակիորեն դրանք ուսումնասիրվել են (Հ. Ա. Ազիզյան)։ Իր առանձնահատկություններով վաղ միջնադարյան հնէամարդաբանական նյութը միջանցիկ տեղ է գրավում վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակիչների և ժամանակակից հայերի միջև[45]։ Միջնադարյան գանգերի դեմքի լայնությունը ավելի մեծ է, քան Սևանա լճի ավազանի հարավ-արևելյան մասի վաղ երկաթի դարաշրջանի գանգերինը և ընդհակառակը՝ ավելի փոքր, քան նույն վայրի արևմտյան խմբինը[46]։

Փաստորեն միջնադարյան Հայաստանի բնակչության մարդաբանական կերպարի ձևավորումը ընթացել է վաղ շրջանի լայնադեմ և նեղադեմ տիպերի ձուլման ճանապարհով։ Կլորագանգ տիպերի տեսակարար կշիռը միջնադարում աճում է։ Քանի որ իրենց դեմքի լայնությամբ այդ կլորագանգ տիպերը

---

41 В. В. Бунак, Древнейшие краниологические типы Передней Азии, «Краткие сообщ. ин-та этнографии», вып. 11, 1947.

42 Р. М. Касимова, Антропологическое исследование черепов из Мингечаура, Баку, 1960, էջ 20—32։

43 Վ. Պ. Ալեքսեև, նշվ. աշխ., էջ 21։

44 Նույն տեղում։

45 В. П. Алексеев, Итоги изучения палеоантропологии Кавказа, էջ 146։

46 Նույն տեղում։

համարյա չեն տարբերվում երկարագանգ տիպերից, ապա այդ պրոցեսի հընարավոր և լավագույն բացատրությունն այն է, որ այստեղ մարդաբանությունը գործ ունի սովորական բրախիկեֆալիզացիայի (կարճագլխայնացման) հետ[47]։ Առկա նյութերի քննությամբ պարզվում է, որ Կովկասի մարդաբանական տիպերի պատմության մեջ ամենամեծ դերը կատարել է եվրոպեոիդ երկու մեծ ռասաների՝ նախակերպային մի շարք առանձնահատկություններ պահպանած զանգվածեղ և լայնադեմ տիպի ու եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղի մեջ մտնող նեղադեմ տիպի փոխներգործությունը[48]։ Ավելի ուշ ժամանակաշրջաններում այլ ռասաների ներկայացուցիչների հետ շփումը նշանակալից ազդեցություն չի թողել Հայաստանի տեղական բնակչության մարդաբանական կազմի ձևավորման վրա։

* * *

Ամեն մի ժողովուրդ իր էպիկական հերոսների արտաքին հատկանիշները միշտ գուներ է տիպավորել, նրանց մեջ մարմնացնելով գեղեցիկի ու առնականի հասկացությունը։ Սակայն հերոսների նկարագրման ժամանակ երբեք նրանց չեն վերագրվել այնպիսի հատկանիշներ, որոնք ընդհանրապես խորթ էին տվյալ ժողովրդի համար։

Հայերի մարդաբանական հատկանիշների առաջին նկարագրությունը տվել են միջնադարյան հայ պատմիչները, քնարերգուները և գուսանները։ Հակառակ հույն պատմիչների ունեցած սովորության (որոնք ամենայն մանրամասնությամբ են նկարագրել իրենց հերոսներին), հայ պատմիչները շատ ժլատ են իրենց հերոսների նկարագրության մեջ։ Այս տեսակետից բացառություն է կազմում պատմահայր Մովսես Խորենացին։ Նրա հերոսների նկարագրությունը պարունակում է նաև մարդաբանական այնպիսի տվյալներ, որոնք անտեսելը անհնար է։ Հայերի առասպելական նահապետը՝ Հայկը, Խորենացու նկարագրությամբ, հանդես է գալիս որպես «գեղապատշաճ եւ անձնեայ, քաջագանգուր, խայտակն եւ հաստաբազուկ» (գիրք 1, գլուխ Ժ)։ Հայոց Տիգրան թագավորի մասին նա ասում է. «Խարտեաշս այս եւ աղեբեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան, երեսօք դունեան եւ մեղուակն, անձնեայն եւ թիկնաւէտն, առոգաբարձն եւ գեղեցկոտն» (I, ԻԴ)։ Հայկի սերնդից Հրաչյայի անունը Խորենացին հետևյալ կերպ է ստուգաբանում. «Սա Հրաչյա է կոչվում առավելապես պայծառ երես և բոցավառ աչքեր ունենալու համար» (I, ԻԲ)։ Խորենացու հերոսներից մեկը կրում է Վարդգես անունը, մեկ ուրիշը ունի «դեղձան հերք»։

Անհամեմատ ավելի շատ արժեքավոր տվյալներ է պարունակում վիշապաքաղ Վահագնի մասին եղած առասպելը, հատկապես այն հատվածը, որտեղ պատմվում է Վահագնի ծննդյան մասին։ Գրանցելով հայ գուսանների երգերը Վահագնի մասին, Խորենացին մեզ է հասցրել շատ գողտրիկ պատառիկ, որտեղ ասվում է. «Ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր, եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ունէր, [ապա թէ] բոց [ունէր] մորուս, եւ աչկունքն էին արեգակունք» (I, ԼԱ)։

---

47 Г. Ф. Дебец, Палеоантропология СССР, էջ 295—319։

48 В. П. Алексеев, նշվ. աշխ., էջ 148։

Խորենացին իր հերոսներին դյուցազնական կերպարանք տալով, նրանց վերագրելով առնական գեղեցկություն, բարձր հասակ, հաղթ բազուկ և լայն թիկունք, չափակցված անդամներ, միաժամանակ տալիս է նաև բնորոշ մարդաբանական հատկանիշներ ու տվյալներ։

Հայկի նկարագրության մեջ հանդիպող «խայտակն» բառը ուսումնասիրողներից Գ. Վանցյանը[49] ստուգաբանում է որպես «կապույտ աչի», որը չէր ընդունում Հ. Տաշյանը[50]։ Վերջինս այն ստուգաբանում էր որպես «խայտացող աչք», այնպես, ինչպես իր ժամանակին ստուգաբանված էր Հայկազյան բառարանում՝ «խայտ կամ խայտալից աչօք, զվարթագին, քաղցրահայացք»։ Հ. Աճառյանը (Արմատական բառարան, տես «խայտ» բառի տակ) այն ստուգաբանում է որպես խայտ-բիծ, պիսակ, անջատելով այն խայտալ-ուրախանալ բառից։ Ըստ այդ բացատրության, խայտակն նշանակում է «աչքի մեջ, սպիտակուցի վրա բիծ կամ նշան ունեցող»։

Ստուգաբանության կարիք է զգում նաև «մեղուակն» բառը։ Հայկազյան բառարանի կազմողներն այդ բառը բացատրել են՝ «ակն է իբրեւ զաչս մեղուաց, մեղոյշ, անուշահայեաց, քաղցրատեսիլ»։ Այսպիսի ստուգաբանությունը երբեք վերջնական չպետք է համարել։ Միանգամայն ճիշտ են Պ. Էսապալյանի փորձերը, երբ նա ավելի պարզեցնելով այդ բառի իմաստը, այն կապում է մեղր բառի հետ, որից և «մեղուակն» ստուգաբանում է որպես մեղրագույն-շագանակագույն աչք[51]։ Խորենացու հերոսներն ունեն գանգուր, խարտյաշ, հուր, շեկ, վարդագույն, դեղձան մազեր, բոցագույն մորուք, բոցապայծառ, մեղրագույն (շագանակագույն), բոցակնագույն աչքեր։

Երբեք չպետք է մտածել այն մասին, թե իբր Խորենացին իր հերոսներին ավելի գեղեցիկ պատկերելու համար մտացածին մարդաբանական հատկանիշներ է նրանց վերագրել։ Կասկած չի կարող լինել, որ շրջապատում տեսնելով վերը նկարագրած հատկանիշներն ունեցող մարդկանց, Խորենացին իր հերոսների միջոցով պատկերել է իրեն ժամանակակից հայերին։

Խորենացու մոտ և ոչ մի տեղ հիշատակություն չկա թուխ և սև մազերի ու աչքերի մասին, չնայած որ թե՛ նրա ժամանակակից, և թե՛ հետագայի հայ պատմիչներն ու բանաստեղծները հայերին նկարագրել են նաև թուխ մազերով ու թուխ մաշկով։ Խորենացու ժամանակակից պատմիչներից Փավստոս Բուզանդը նկարագրելով հայոց Արշակ թագավորին, գրում է, որ նա «թաւ է մազերաւ և թուխ է գունով»[52]։ Բուզանդը հայերին թավ ու թուխ մազերով և մաշկի գույնով ներկայացնելու մեջ բացառություն չի կազմում։ Միջնադարյան հայ տաղասացները քիչ տողեր չեն նվիրել հայ կնոջ գովաբանմանը, նրա գեղեցկության նկարագրմանը։ Այսպես, օրինակ, Գրիգորիս Աղթամարցու մոտ հայ կինը ունի վարսեր՝ «ինչպես թուխ սաթը», Նաղաշ Հովնաթանի մոտ՝ «սիահ ծամեր», Հովհաննես Թլկուրանցու մոտ՝ «սպիտակ ճակատ, թուխ-թուխ աչեր», Նահապետ Քուչակի մոտ՝ «թուխ աչք, թուխ ունք, թուխ մազեր»։

---

49 Գ. Վանցյան, Դիտողություններ Խորենացու մասին. Ա. Հին հայոց տիպարն ու հաշակն ըստ Խորենացու, «Արարատ», 1900, էջ 186—190։

50 Հ. Տաշյան, Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920, էջ 40—42։

51 Պ. Էսապալյան, Հայերը մարդախոսական տեսակետե, «Հանդես ամսօրյա», 1934, № 11—12, էջ 543։

52 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, էջ 122։

Ներկայումս դժվար է ասել, թե ինչ նկատառումներով է Խորենացին առաջնորդվել իր հերոսներին տիպավորելու հարցում, երբ իր իսկ ժամանակակից, ինչպես բաց գույնի մաշկ և շեկ մազեր, պայծառ դույնի աչքեր, այնպես էլ թուխ մաշկ և մազեր ու սև աչքեր ունեցող հայերի մեջ առաջնությունը տալիս է շեկ տիպի ներկայացուցիչներին։ Ամենայն հավանականությամբ, Խորենացու մոտ գեղեցիկի հասկացողությունը, իր հերոսների արտաքին, մարմնական հատկանիշների նկարագրման ժամանակ, առնչվել է առաջին հերթին անձնական ընկալումների և անտիկ աշխարհի վիպական հերոսների կողքին միևնույն աստիճանին հայ դյուցազուններին կանգնեցնելու հետ։

Միջնադարյան վերոհիշյալ աղբյուրների վկայությունները ուսումնասիրողներից ոմանց հետևությունն այն է, թե հայերը երկու տարբեր ժողովուրդների ձուլումից առաջ եկած ժողովուրդ են։ Ձուլման այդ պրոցեսը իբր թե ընթացել է շեկ և թուխ գույն ունեցող ժողովուրդների պայքարով, որի ընթացքում հաղթող են հանդիսացել թուխերը, որոնք թվով շատ էին և ավելի կենսունակ։ Սակայն ձուլվելով թուխերին, շեկ տիպը լիովին չանհետացավ և հարատևել է առ այսօր[53]։ Այս առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ժամանակակից հայերի մարդաբանական ու մարմնական տվյալները։

Մարդաբանության մեջ ընդունված է մարդու միջին հասակը համարել 165 սմ։ Ինչպես ցույց են տվել տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կատարված դիտումները, հայերի հասակի բարձրության միջինը այդ թվից բարձր է։ Շանթրը Հայաստանում չափել է 297 տղամարդու, որոնց միջին բարձրությունը ստացվել է 168 սմ, իսկ կանանցը (44 հոգու)՝ 153 սմ։ Երևանում և Գորիսում Շանթրը հանդիպել էր տղամարդկանց, որոնց բարձրությունը հասնում էր 182 սմ[54]։ Է. Պիտարը Դոբրուջայում չափագրելով ռումինահայերին, նրանց հասակի միջին բարձրությունը համարել էր 166 սմ։ Հարյուր հայի չափագրության մեջ հասակի բարձրությունը, տոկոսային հարաբերությամբ, ըստ Պիտարի դիտումների, ուներ հետևյալ պատկերը[55].

160 սմ-ից ցած —	19,70 %
160—165 սմ—	15,78 %
165—170 սմ—	42,08 %
170-ից բարձր—	22,35 %

Ըստ Գ. Մ. Աբդուշելիշվիլու դիտումների, Ալավերդու շրջանում տղամարդու միջին բարձրությունը կազմում է 167,7 սմ (100 մարդ), Նոյեմբերյանի շրջանում՝ 166,2 սմ (101 մարդ), Աշտարակի շրջանում՝ 165,9 սմ (102 մարդ), Գորիսի շրջանում՝ 166,9 սմ (101 մարդ), Մեղրու շրջանում՝ 164,7 սմ (100 մարդ), Արտաշատի շրջանում՝ 164,6 սմ (100 մարդ), Եղեգնաձորի շրջանում՝ 164,2 սմ (100 մարդ), Կալինինոյի շրջանում՝ 165,8 սմ (100 մարդ), Կամոյի շրջանում՝ 166,4 սմ (100 մարդ), Թալինի շրջանում՝ 167,9 սմ (100 մարդ)[56]։

---

53 Պ. Էսապալյան, նշվ. աշխ.։

54 E. Chantre, Armeniens, esquisse historique et ethnographique, „Bulletin de la Société d'anthropologie et de biologie de Lyon", t. 13, Lyon et Paris, 1895.

55 E. Pittard, Contribution a l'etude anthropologique des Armeniens, „Bulletin de la sociéte roumaine des sciences", Bucarest, t. XXI, 1912, էջ 341—348։

56 Г. М. Абдушелишвили, Антропология древнего и современного населения Грузии, Тбилиси, 1964, էջ 154—155։

Տարբեր շրջաններում, տարբեր մարդաբանների կողմից չափագրված նյութի համեմատությունը նույնպես վկայում է հայերի միջին հասակից բարձր լինելը։

Ուսումնասիրողներ	Տվարյանովիչ	Անսերով	Էրիքսոն	Ջավախիշվիլի
Դիտումների թիվը	105	112	103	886
Դիտումների ժամանակը	1926	1926	1907	1925
Մինչև 160 սմ	17,14%	21.4%	16%	12%
161—165 սմ	17,14%	37,5%	59%	59%
166—170 սմ	38,1%	25,9%	—	—
171 սմ բարձր	27,66%	15,2%	25%	
Միջինը	—	165.5	166,18	167,1

Ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ տվյալները, հայերի հասակի միջին բարձրությունը կազմում է 165—167 սմ, այսինքն՝ հայերի հասակը ընդհանուր միջին հասակից բարձր է[57]։

Ապացուցված է, որ մարդու մաշկի գույնը էապես կախված է գունանյութի (pigment) պարունակությունից, որը մասամբ մաշկի և մասամբ էլ եղջերամորթի բջիջների մեջ է կուտակված։ Մաշկի գույնի տարբերությունը փաստորեն կախված է գունանյութի խիտ կամ նոսր խմբավորման աստիճանից, և թե՛ աշխարհագրական, թե՛ կլիմայական պայմանների ազդեցությունը շատ չնչին է։ Հայերի մաշկի գույնը հիմնականում թուխ է։ Ս. Ջավախիշվիլին 100 հայի վրա դիտումներ կատարելիս նկատել է մաշկի գույնի հետևյալ հարաբերությունը. սպիտակ՝ 3 %, թուխ՝ 85 %, խիստ թուխ՝ 12 %։

Հայերի մոտ գերակշռում է նաև մազերի թուխ գույնը՝ իր մերձավոր երանգներով։ Քիչ չեն հանդիպում նաև շիկահեր հայեր։ Ինչպես հայտնի է, հնդեվրոպական մարդաբանական տիպը բնորոշվում է նաև մազերի շեկ գույնով, որը գերակշռում է։ Շանթրի դիտումների համաձայն, շեկ մազերով հայերը հազվադեպ են, թեև նրա ուսումնասիրած 341 հայերի մեջ շեկ մազ ունեցողների թիվը կազմում էր 11 %։ Ջավախիշվիլին իր ուսումնասիրած 729 հայերին, մազերի գույնի տոկոսային հարաբերությամբ, բաժանել է հետևյալ կերպ՝ բաց գույնի շեկ՝ 6 %, մուգ շեկ՝ 27 % և 67 %՝ սև կամ թուխ։ Մ. Գ. Աբդուշելիշվիլու կողմից Հայաստանի տասը շրջաններում 806 հայերի դիտումների ժամանակ մուգ շեկ գույն ունեցողները կազմել են ընդամենը 14,7 %։

---

[57] И. К. Тварьянович, Материалы к антропологии армян, С. Петербург, 1897; Э. В. Эриксон, К антропологии армян, «Русский антропологический журнал», 1907, № 3—4; Н. И. Ансеров, Нахичеванские на Дону армяне в антропологическом отношении, «Русский антропологический журнал», 1926, № 15; A. Dschawachischwili, Die Rassenzusamnensetzung der Kaukasus — Völker, „Archiv für Anthropologie", Bd. XX, 1927, էջ 77—90։

Հայերի մազերը խիտ են։ Քիչ են պատահում սակավամազ մարդիկ։ Դիտումները ցույց են տալիս, որ միջին խտության մազ ունեցողների թիվը 30 %-ից չի անցել, իսկ թավ մազ ունեցողները մշտապես գերակշռել են (68—70 %)։ Հայերի մազերի ձևը հիմնականում հարթ է, քիչ չեն նաև ալիքաձև մազեր ունեցողները։

Հիմնականում թուխ է նաև հայերի աչքի գույնը։ Շանթրը 341 հայերի մոտ հանդիպել է սև գույնի աչք ունեցող 192 մարդու (56 %), շագանակագույն՝ 113 մարդու (33 %), կապույտ կամ բաց գույն՝ 36 մարդու (11 %)։ Ա. Ջավախիշվիլու կողմից դիտված 2141 հայերի մեջ բաց գույնի աչք ունեցողները կազմել են 9 %, թուխ գույն ունեցողները՝ 81 %, այլ գույներ ունեցողները՝ 10 %։ Սովետական Հայաստանի 10 շրջաններում Աբգուշելիշվիլու կողմից ուսումնասիրված 1000 հայերի մոտ բաց գույնը կազմել է 6 %. տարբեր գույները՝ 66 %, իսկ թուխը՝ 28 %։

Ժամանակակից հայերն իրենց տիպին բնորոշ առանձնահատուկ շեշտված քիթ ունեն։ Ինչպես ցույց են տալիս մարմնական տվյալները, հայերի քթի արմատը միջակ է ու նեղ, քթի ետևի մասը՝ միջակ նեղ, ուռուցիկ ու հարթ, քթի ծայրը՝ հաճախ խիստ, նաև թեթև կոր։ Հանդիպում են նաև քթի թևերը բարձր, թեթև կամարաձև, երբեմն ուղիղ, միջնորմը ավելի վար ցցված, երբեմն հորիզոնական քիթ ունեցող հայեր։

Հայերն ունեն հիմնականում նուրբ և բարձրարմատ քիթ, բերանը սովորաբար փոքր է, ականջը՝ բնական աճած, հիմնականում՝ մեծ, քան փոքր։

Ժամանակակից հայերի գանգաբանական տվյալների համաձայն հայերի մեծագույն մասը կարճագանգ է ու լայնադեմ, չնայած երբեմն հանդիպում են միջագլուխներ։ Երկարագանգեր համարյա չկան։ Ա. Ջավախիշվիլին 833 հայերի մոտ գտել էր 1 % երկարագանգ, 3 % միջագանգ և 96 % կարճագանգ։

Հնէամարդաբանական նյութերը ցույց են տալիս, որ արդեն մ. թ. ա. I հազարամյակի սկզբներից Հայկական լեռնաշխարհում ապրող տեղաբնիկ ցեղերը մարմնական ու գանգաբանական տեսակետից կազմում էին մարդաբանական հատկանիշների մի ընդհանրություն, որը հիմնականում պահպանվել է և հանդես է գալիս ժամանակակից հայերի կերպարով։

* * *

Ողջ նյութի քննարկումը հնարավորություն է տալիս գալու հետևյալ հիմնական եզրահանգման.

Առաջավոր Ասիայում հնագույն ժամանակներից սկսած գերիշխել է դոլիխոկրան (երկարագանգ) մարդաբանական տիպը։ Այս նույն տերիտորիայում էլ հետագայում առաջացել և կազմավորվել է ժամանակակից բրախիկրան (կարճագանգ) առաջավորասիական կամ արմենոիդ տիպը։

Առաջավորասիական մարդաբանական տիպի ներկա տարածման տվյալները ցույց են տալիս, որ նրա ձևավորումը տեղի է ունեցել մոտավորապես այն տերիտորիայում, որտեղ տարածվել էր և այժմ էլ գոյություն ունի։ Մարդաբանական այս տիպը դեռևս հեռավոր ժամանակներում լայնորեն տարածվել էր Միջագետքում, նրա հարավից մինչև Տիգրիսի ու Եփրատի վերին հո-

սանքները, Փոքրասիական բարձրավանդակի, Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Իրանի մեծ մասում։

Հիմնավորված չէ որոշ մարդաբանների այն տեսակետը, ըստ որի արմենոիդ տիպը Առաջավոր Ասիայում հնագույն ժամանակներում ընդհանրապես գոյություն չի ունեցել, թե այստեղ հիմնականում տիրապետող է եղել երկարադանգ տիպը, իսկ կարճագանգը միայն վաղ բրոնզի դարաշրջանում է սկսում հանդես գալ, որը բացատրվում է դեպի Առաջավոր Ասիա հնդեվրոպական ցեղերի կատարած ներգաղթով։ Ըստ այդ տեսության, բրոնզի դարի ողջ ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայում միմյանց կողքի գոյություն ունեին երկարագանգ և կարճագանգ ցեղեր, որոնք հետագայում ձուլվեցին։ Ձուլման այդ պրոցեսում հաղթող դուրս եկավ ներգաղթ կատարած կարճագանգ տիպը։

Իրոք, դժվար է ժխտել մարդաբանական հարուստ նյութերով հիմնավորվող այն փաստը, որ Առաջավոր Ասիայում (այդ թվում և Հայկական լեռնաշխարհում) գոյություն ուներ և հնագույն ժամանակներից (էնեոլիթ) գերիշխող էր երկարադանգ մարդաբանական տիպը և որ բրոնզի դարաշրջանում հանդես է գալիս նաև կարճագանգը։ Եվ վերջապես, երկաթի և նրան հաջորդող պատմական ժամանակաշրջաններում գերակշռությունը անցնում է կարճագանգ տիպին, և երկարադանգ տիպն անհետանում է։

Մարդաբանների վերոհիշյալ տեսությունը հիմնավորվում էր նաև այն շատ կարևոր փաստով, որ Առաջավոր Ասիա (ինչպես և Հայկական լեռնաշխարհ) ներգաղթած հնդեվրոպական ցեղերը տեղաբնիկներին պարտադրեցին իրենց լեզուն, որը և գերիշխեց հետագայում։ Լեզվագիտական տեսանկյունից բացառված չէ, որ ցեղերի կամ ժողովուրդների հոծ զանգվածները կարող են ժառանգել քանակով ավելի փոքր ցեղերի կամ ժողովուրդների լեզուն, հատկապես, երբ վերջիններս, լինելով հզոր և տիրապետող, կարող էին նրանց պարտադրել այն։

Ցեղասերման պրոցեսում ֆիզիկական (մարդաբանական) ժառանգությունը միանգամայն հակառակն է ցույց տալիս։ Մարդաբանական տեսակետից, կազմավորված ժողովուրդների ժամանակակից տիպերը հիմնականում շարունակում են պահպանել այն նախնիների մարմնական ու գանգաբանական հատկանիշները, որոնք մեծամասնություն էին կազմում, եթե նույնիսկ փոքրամասնությունը առաջիններին պարտադրել էր իր լեզուն։

Այն հարցին, թե ինչպես երկարադանգ տիպը Հայկական լեռնաշխարհում տեղի տվեց կարճագանգ տիպին, և վերջինս դարձավ կազմավորված հայ ժողովրդի մարդաբանական կերպարը, պետք է տալ միայն մեկ պատասխան. այս խնդրի հնարավոր և լավագույն բացատրությունն այն է, որ մարդաբանությունն այստեղ գործ ունի սովորական բրախիկեֆալիզացիայի (կարճագլխայնացման) պրոցեսի հետ, որի ընթացքում զգալի դեր է կատարել նաև եվրոպեոիդ երկու մեծ ռասաների՝ նախակերպային մի շարք առանձնահատկություններ պահպանած զանգվածեղ և լայնադեմ տիպի ու եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղի մեջ մտնող նեղադեմ տիպի փոխներգործությունը։

Վաղ երկաթի դարաշրջանից սկսած այլ ռասաների ներկայացուցիչների հետ շփումները Հայկական լեռնաշխարհի տեղական բնակչության մարդաբանական կազմի ձևավորման վրա որևէ նշանակալից ազդեցություն չեն թողել։

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ИЗУЧЕНИЯ ЭТНИЧЕСКОЙ АНТРОПОЛОГИИ АРМЯН

Л. А. БАРСЕГЯН

(Резюме)

В статье проблемы этногенеза армян рассматриваются в свете антропологических данных. Эти данные приводят к выводу, что современный переднеазиатский антропологический тип, известный в науке еще и как арменоидный, в историческое время формировался на той территории, на которой он существует и сейчас. Не обоснована теория, утверждающая, что в древние времена не существовал арменоидный тип, выступающий якобы на Армянском нагорье после появления индоевропейских племен.

Анализ антропологических данных показывает, что современный антропологический тип армян возник до образования армянского народа и армянского языка и с тех пор не претерпел каких-либо существенных изменений.